

Թաներ Աքչամ, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Եր., «Տիգրան Մեծ», 2015, 583 էջ*:

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, էթնիկ զտումներ, Օսմանյան կայսրություն, երիտթուրքեր, «Հատուկ կազմակերպություն», օսմանյան արխիվային փաստաթղթեր, «5-10 %-ի սկզբունքով» հայերի վերաբնակեցում, «սոցիալական ինժեներություն»:

Մուտք

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հիմնահարցերով, հայ հետազոտողներից բացի, զբաղվել են նաև օտարազգի, այդ թվում՝ թուրք մասնագետներ, որոնց պամանականորեն կարելի է բաժանել **թուրքական պաշտոնական և ոչ պաշտոնական** տեսակետների կողմնակիցների:

Թուրքական պաշտոնական պատմագրությունը հանդես է գալիս ի դեմս Թուրքական պատմագիտական ընկերության ներկայացուցիչների, ինչպես նաև առանձին թուրք պատմաբանների, որոնք առաջ են մղում թուրքական իշխանությունների որդեգրված և տասնամյակներ շարունակ շրջանավոր Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման հայտնի հորինվածքները՝ տարբեր լեզուներով հրատարակելով բազմաթիվ աշխատություններ¹: Ի տար-

* Ընդունվել է տպագրության 31.05.2022:

¹ **Stü Uras E.**, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, **Koças S.**, Tarih boyunca Ereniler ve Türk - Ermeni ilişkileri, Ankara, 1967, **Ozkaya C.**, Le peuple arménien et les tentatives de réduire le peuple turc en servitude, Istanbul, 1971, **Deliorman A.**, Türklere Karsi ermeni komiteceleri, Istanbul, 1973, **Karal Z.**, Armenian Question, Ankara, 1975, **Yalçin A.**, Belgelerin isiginde türk-ermenii meselesinin iç yüzü, Istanbul, 1975, **Vefa A.**, Truth about Armenians, Ankara, 1975, **Demir K.**, Türkiyde Ermeni meselesi, Ankara, 1976, **Eroglu V.**, Ermeni meزالimi, Istanbul, 1976, **Hocaoglu M.**, Arsiv vesikariyla tarihteermenimeزالimi ve Ermeniler, Istanbul, 1976, **Sonyel R.**, Ermeni tahciri ve belgeler, Ankara, 1978, **Արցունի** The Ottoman

բերություն այս ուղղության՝ թուրքական ոչ պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներն ընդունում են հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործության փաստը՝ իրենց աշխատություններում այն որակելով որպես «ցեղասպանություն»: Ունանք նույնիսկ անդրադառնում են հայերի ապօրինաբար բռնազավթված ունեցվածքը վերադարձնելու հարցերին², սակայն շրջանցում կամ խուսափում են քննարկել **հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքի վերականգնման հարցը**: Այս ուղղության վառ ներկայացուցիչներից է թուրք պատմաբան և սոցիոլոգ Թաներ Աքչամը*,

- Armenians. Victims of great power diplomacy, London, 1985, **Parmaksizoglu I.**, Ermeni komitelerinin ihtilal hareketleri ve besledikleri emeller, Ankara, 1981, **Մույնի** The Armenian issue in nine questions and answers, Ankara, 1982, **Anadol C.**, Tarih'in isiginda Ermeni dosyasi, Istanbul, 1982, **Gürün K.**, Ermeni Dosyasi, Ankara, 1983, **Simsir B.**, The genesis of the Armenian Question, Publicationa of the Turkish Historical Society, Ankara, 1984, Serial VII, N 84, **Մույնի** The deportees of Malta and the Armenian Question, Ankara, 1984, **Orel S., Yuca S.**, Les télégrammes de Talaat Pacha, Paris, 1986, **ԱթօՎ T.**, Hitler and the "Armenian Question", Ankara, 1984, **Մույնի** A brief glance at the "Armenian Question", Ankara, 1984, **Մույնի** Les décès dus à la maladie en relation avec la question arménienne, Ankara, 1985, **Türközü K.**, Armenian atrocities according to ottoman and Russian documents, Ankara, 1986, **Alpaslan I.**, Anadolunun giris kapisı, Ankara, 1984, **İlter E.**, Ermeni kilesesi ve terur, Ankara, 1996, **Osman S.**, Kocahanoglu. İttihatTerrakki nin Sorgulanması ve Vargilanması, Istanbul, 1998, **Perincek M.**, AtatürkünSovyetler'le Görüşmeleri: Sovyet Arşiv Belgeleriyle, Ankara, 2005:
- 2 **Տե՛ս Kurban D., Hatemi K.**, The story of an alien(ation): Real estate ownership problems of non-Muslim foundations and communities in Turkey, Istanbul, 2010, **Üngör U.**, A reign of Terror; CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923, Amsterdam, 2005, **Akçam T., Kurt Ü.**, Kanunlarin Ruhı. Emval-I Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, İletişim Yayınları, Istanbul, 2012, **Aktar A.**, Cumhuriyetin ilk yıllarında uygulanan Türkleştirme Politikaları, Tarih ve Toplum, N 156, էջ 4-18, **Մույնի** Son Osmanlı Meclisi ve Ermeni Meselesi: kasım-aralık 1918, Toplum ve Bilim, Kiş 2001/2002, N 91, էջ 142-165, Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları, İletişim Yayıncılık, Istanbul, 2000, **Bardakçı M.**, Talât Paşa' nin Evrak-I Metrükesi, Istanbul, 2008, **Cetinoğlu S.**, Sermayenin Türkleştirilmesi, Resmi Tarih Tartışmaları – 2, Ed. F. Başkaya, 2, Waski, 2009, **Kadeş S.**, Tehrir ve Emval-I Metruke Mevzuatı, Ankara, 2008, **Onaran N.**, Emvâl-i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi, Istanbul, 2010:
- * Ծագունով թուրք մեսիտեթի է, ծնվել է 1953 թ. Արդահանի շրջանի Օլչեք գյուղում: 1976 թ. ավարտել է Անկարայի Մերձավոր Արևելքի տեխնիկական համալսարանի տնտեսագիտության բաժինը: Զախակողմյան շարժումներից մասնակցելու և քրդերի իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու համար 1977 թ. դատապարտվել է 9 տարվա ազատազրկման: Նրան հաջողվել է փախչել Անկարայի կենտրոնական բանտից և 1978 թ. քաղաքական ապաստան գտնել Արևմտյան Գերմանիայում: Համբուրգի սոցիալական հետազոտությունների ինստիտուտում զբաղվել է թուրքիայում խոշտանգումների խնդիրներով, իսկ հետագայում Հայոց ցեղասպանության պատմության հարցերով և 1995 թ. Հաննովերի Վ. Լայբնիցի անվան համալսարանում «Թուրքական ազգայնականությունը և Հայոց ցեղասպանությունն ըստ 1919-1922 թթ. Ստամբուլի զինվորական տրիբունալների նյութերի» վերնագրով պաշտպանել է ատենախոսություն ստանալով դոկտորի աստիճան: Այնուհետև տեղափոխվել է ԱՄՆ և դարձել անվանի ցեղասպանագետ Վ. Դադրյանի ուսանող: Հետագայում եղել է Մինեսոտայի համալսարանի պատմության դոցենտ, Քլարկի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանությունների ուսումնասիրության կենտրոնի գիտաշխատող, 2008 թվականից նույն համալսարանի Հայոց ցեղասպանության ուսումնասիրության կենտրոնի ղեկավար:
- «Ակոս» թերթի 2006 թ. հոկտեմբերի 6-ի համարում ի պաշտպանություն Հայոց ցեղասպանության մասին հողվածներ հրատարակող խմբագիր Հր. Դինքի հանդես գալու համար 2007 թ. Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով նախատեսված «թուրքականությունը վիրավորելու» մեղադրանքով Աքչամի դեմ սկսվեց հետաքննություն: Դինքի սպանությունից հետո թուրք ազգայնականների հաշվեհարդարից վախենալով՝ Աքչամն իրեն պաշտպանելու խնդրանքով դիմեց Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդին և նախագահ Սարկոզին: Թեև 2007 թ. Ստամբուլի դատարանը դադարեցրել էր Աքչամի դեմ գործի քննությունը,

ով Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ հրատարակել է մի շարք աշխատություններ³, որոնք թարգմանվել են տարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն:

Աքչամի հայերեն թարգմանված ուսումնասիրություններից է **«Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում»** աշխատությունը, որի հենց վերնագրում, փաստորեն, հայ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանության պատասխանատուների շրջանակը սահմանափակվում է միայն երիտթուրքերով: Ինչպես հայտնի է, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին միմյանց հաջորդած համիդյան, երիտթուրքական և քեմալական վարչակարգերը, անկախ միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից, Հայկական հարցում ունեին միևնույն դիրքորոշումը և հետևողականորեն իրականացնում էին հայ ժողովրդին բնաջնջելու քաղաքականությունը: **Հայոց ցեղասպանության պատասխանատուների շրջանակից համիդյան և քեմալական վարչակարգերը միտումնավոր դուրս թողնելով՝ Աքչամն աղձատում է հայ ժողովրդի նկատմամբ թուրքական բոլոր վարչակարգերի կողմից շարունակաբար իրագործված հանցավոր քաղաքականությունը՝ թերևս այդ կերպ փորձելով շրջանցել Օսմանյան կայսրության իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետության՝ ցեղասպան քաղաքականությունը շարունակելու թեման:**

Գրքի վերնագրում «ցեղասպանություն» եզրույթի հետ մեկտեղ գործածված է նաև «էթնիկ զտումներ» ձևակերպումը, որը, Միջազգային քրեական դատարանի կանոնադրության և մյուս փաստաթղթերի համաձայն, «մարդկության դեմ կատարված հանցագործությունների» տարատեսակներից է և «ցեղասպանություն» եզրույ-

սակայն այդ գործով դիմում էր ներկայացվել ՄԻԵԴ, որի 2011 թ. հոկտեմբերի որոշմամբ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը որակվեց խոսքի ազատությունը խախտող:

3 Տե՛ս Akçam T., Rethinking Modernity and National Identity in Turkey, Ed. by Sibel Bozdogan, Resat Kasaba, University of Washington Press, Publications on the Near East, 1997, Dialogue across an international divide: Essays towards a Turkish-Armenian dialogue, Zoryan Institute, 2001, From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide, Zed Books, 2004, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York: Metropolitan Books/Henry Holt & Company, 2006, The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton University Press, 2012, Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide, New York: Palgrave, 2018:

թի հետ չի նույնացվում⁴: Նույնիսկ եթե Աքչամը «էթնիկ գտումներ» եզրույթը գործածում է Բուլղարիայի և Հունաստանի մահմեդական բնակչության հետ Օսմանյան կայսրության բուլղար և հույն բնակչության փոխանակման և վերջիններիս բռնի տեղահանությունների համատեքստում, այդուհանդերձ, այդ գործընթացները Հայոց ցեղասպանության հետ միննույն հարթության վրա դիտարկելն արդեն իսկ նսեմացնում է հայ ժողովրդի նկատմամբ կատարված միջազգային ծանր հանցագործությունը: «էթնիկ գտումներ» եզրույթը, սակայն, գործածվում է նաև Արևմտյան Հայաստանի տարածքների վերաբերմամբ, որոնք Աքչամն անվանում է արհեստական «Արևելյան Անատոլիա» և նշում, որ այնտեղ տեղի է ունեցել «էթնիկ գտում, մասնավորապես՝ հայերի ցեղասպանություն»⁵, ինչն արդեն վկայում է թուրք պատմաբանի կողմից բովանդակային առումով իրարից տարբերվող այդ երկու եզրույթների միտումնավոր համահարթեցման մասին:

1. Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական արխիվներում պահվող փաստաթղթերի քննությունը

Աշխատության հիմնական արժեքն այն է, որ հայ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների իրագործած ցեղասպանական քաղաքականության դրսևորումները ներկայացվում են Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության անվտանգության ընդհանուր վարչության գրասենյակի, ինչպես նաև ծածկագրերի վարչության⁶ շուրջ 600 փաստաթղթերի հիման վրա, որոնց մեծ մասն առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ⁷:

Թուրքական պետական արխիվների նյութերի քննության ընթացքում Աքչամն անդրադարձ է կատարում Հայկական հարցի և

4 Տե՛ս **Murray A.**, Does International Criminal Law Still Require a ‘Crime of Crimes’? A Comparative Review of Genocide and Crimes against Humanity, “Goettingen Journal of International Law”, Göttingen, 2011, N 3, էջ 608-612:

5 **Աքչամ Թ.**, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ գտումները Օսմանյան կայսրությունում, Եր., «Տիգրան Մեծ», 2015, էջ XV:

6 Ծածկագրերի վարչության միջոցով Ներքին գործերի նախարարությունը հաղորդակցվում էր տարբեր նահանգներում և գավառներում գործող իր բաժանմունքների և վարչությունների հետ: Բացի այդ՝ ծածկագրերի վարչությունը միջնորդ գրասենյակ էր, որի միջոցով մյուս նախարարություններն ու պետական վարչությունները երբեմն ծածկագրում էին իրենց իրատապ կամ զաղտնի հաղորդագրությունները: Ծածկագրերի վարչության վավերագիր 20.640 փաստաթղթերի միայն մի փոքր մասն է հասանելի ուսումնասիրողներին (տե՛ս նույն տեղում, էջ XII):

7 Տե՛ս նույն տեղում, էջ XV:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ գոյություն ունեցող երկու իրարամերժ մոտեցումներին: Գերազանցապես վկայակոչելով Ստամբուլի օսմանյան վարչապետական արխիվը⁸՝ թուրքական պաշտոնական պատմագրությունը պնդում է, որ օսմանյան արխիվային նյութերում հայերի համակարգված տեղահանությունների և նրանց բնաջնջելու կանխամտածված քաղաքականության վերաբերյալ տվյալներ չկան: Ոչ թուրքական պատմագրությունը հիմնականում կասկածի տակ է դնում օսմանյան պետական արխիվների անաչառությունը՝ նշելով, որ դրանցում կոծկվում են այդ իրադարձություններին վերաբերող իրական պատմական փաստերը, ուստի ավելի արժանահավատ են համարվում արևմտյան արխիվները:

Օսմանյան արխիվային նյութերը ներկայացնելուց հետո հեղինակը համեմատության համար երբեմն մեջբերում է գերմանական կամ ամերիկյան որոշ արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև հայ ականատես-վերապրողների վկայություններ կամ հայ մասնագետների մոտեցումներ՝ ցույց տալու, որ թուրքական փաստաթղթերի տվյալները կրկնվում են նաև մյուս աղբյուրներում⁹: Այս կերպ թուրք պատմաբանը ջանում է ցույց տալ, որ արևմտյան արխիվների և իր կողմից շրջանառվող օսմանյան արխիվների տեղեկությունների միջև հակասություններ չկան, որ դրանք լրացնում են միմյանց, նույն պատմությունն են պատմում, սակայն տարբեր տեսանկյուններից¹⁰: Պետք է նշել, սակայն, որ թուրքական արխիվային նյութերը Աքչամի կողմից միայն եզակի դեպքերում են համադրվում այլ երկրների արխիվային փաստաթղթերի հետ: Հեղինակն ինքն էլ է խոստովանում, որ իր առջև նպատակ է դրել Հայոց ցեղասպանության պատմությունը շարադրելու գերազանցապես օսմանյան արխիվային վավերագրերի հիման վրա՝ դա համարելով իր աշխատության գլխական նորույթը¹¹: Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության համար Աքչամի կողմից նման միակող-

8 Օսմանյան վարչապետական արխիվի առցանց կայքում առանձնացված է «Հայկական հարցն ըստ արխիվային փաստաթղթերի» բաժինը, որում ներկայացված են հայերի տեղահանությունների վերաբերյալ թուրքական պաշտոնական տեսակետն արտահայտող հատուկ ընտրված փաստաթղթեր: Կայքում տեղադրված է մոտ 1500 փաստաթուղթ, իսկ «Տեղահանությունների ենթարկված հայերի պաշտպանությունը և նրանց առողջապահական խնդիրների լուծումը» խորագիրը կրող ենթաբաժնում ընդամենը 6 փաստաթուղթ է, որոնցից հայերի շրջանում վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու հարցի հետ միայն 3-ն ինչ-որ առնչություն ունեն (տե՛ս նույն տեղում, էջ 546):

9 Տե՛ս նույն տեղում, էջ XXVI:

10 Տե՛ս նույն տեղում, էջ XXVII:

11 Տե՛ս նույն տեղում, էջ XXV:

մանի մոտեցման որդեգրումը խիստ սուբյեկտիվ է, առավել ևս, որ խոսքը հայերի զանգվածային բնաջնջման գործընթացը համակարգող Ներքին գործերի նախարարության արխիվի փաստաթղթերի մասին է, ուստի դրանց անաչառությունը և ճշգրիտ թարգմանության ներկայացումը խիստ կասկածելի են:

Աքջամն արձանագրում է, որ կայսրության ծայրամասերից Թալեթի հեռագրերին ի պատասխան ստացված հատուկենտ հեռագրերում հայերի տեղահանություններին և կոտորածներին վերաբերող տեղեկություններ չկան, թեև Թալեթը տեղական պաշտոնյաներից պահանջում էր ուղարկել հայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի, նրանց իրական թվի և մյուս ժողովուրդների հետ հարաբերությունների մասին տվյալներ¹²: Պարզապես անհնար է պատկերացնել, որ տեղական պաշտոնյաներն անպատասխան կթողնեին ներքին գործերի նախարարի հեռագրերը, ուստի օսմանյան արխիվներում նրանց գեկուցագրերի բացակայությունը պետք է բացատրել ապացույցները կոծկելու նպատակով դրանք անմիջապես ոչնչացնելու, ավելի ուշ շրջանում թուրքական արխիվները մաքրագարդելու և/կամ դրանք հատուկ անհասանելի ֆոնդերում պահելու հանգամանքներով:

Հայտնի է, որ թուրքական ռազմական տրիբունալում երիտթուրքերի դատավարության ընթացքում մեղադրող դատախազի կողմից երիտթուրքերի կատարած հանցագործությունների վերաբերյալ փաստաթղթերի երեք խումբ առանձնացվեց: Առաջին խմբում «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթ-ը մահսուսե») փաստաթղթերն էին, որոնք արդեն ոչնչացվել էին: 1918 թ. հոկտեմբերի 14-ին Թալեթին մեծ վեզիրի պաշտոնում փոխարինած Ահմեդ Իզզետ Ֆաշան «Հատուկ կազմակերպությանը» հրահանգել էր անմիջապես դադարեցնել իր գործունեությունը և ոչնչացնել արխիվները: Այս փաստը բրիտանացիներին հայտնել է Անվտանգության վարչության երկրորդ բաժանմունքի ղեկավար Էսադը¹³:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 6:

¹³ Էսադ Ֆաշան (հետագայում Էսադ Ուրաս) ձերբակալվեց բրիտանացիների կողմից, նրանց փոխանցեց հայերին բնաջնջելու հաջորդական քայլերին ու գործողություններին վերաբերող 1914 թ. դեկտեմբերին – 1915 թ. հունվարին երիտթուրք պարագլուխների կողմից ընդունված, այսպես կոչված, «10 պատվիրանների» ծրագիրը (տե՛ս Dadrian V. N., The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, “Holocaust and Genocide Studies”, 1993, Volume 7, No. 2, էջ 174-175):

նշելով, որ գինադադարի համաձայնության կնքումից քիչ առաջ պետական պաշտոնյաները գիշերները արխիվային բաժանմունքում ոչնչացրել են փաստաթղթերի մեծ մասը¹⁴:

Երկրորդ խմբում իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի հարցաթղթերն էին, որոնք գողացել էր դոկտոր Նազըմը¹⁵: Դատավարության ընթացքում ապացուցվեց, որ լուծարումից հետո կուսակցական արխիվը փոխանցվել է նրա փոխարեն ստեղծված «Նորոգում» («Թեջեդուր») կուսակցությանը, սակայն հետագայում դոկտոր Նազըմը այն վերցրել և հեռացել է երկրից¹⁶:

Երրորդ խմբում Ներքին գործերի նախարարության փաստաթղթերն էին, որոնց՝ կարևոր տեղեկություններ և գեկույցներ պարունակող թղթապանակները Թալեաթի՝ երկրից հեռանալուց հետո նրան փոխարինած Ընդհանուր անվտանգության վարչության նախկին տնօրեն Ազիզը իր հետ տարել և չի վերադարձրել¹⁷: Դատավարության ընթացքում Դեր-Ջորի գավառապետ Ալի Սուադը, Բողազլյանի գավառակի կառավարիչ Քեմալը և շատ ուրիշներ վկայություններ են տվել այդ մասին, որ, Կ. Պոլսից տրված հրահանգների համաձայն, շատ փաստաթղթեր ընթերցվելուց անմիջապես հետո այրվել են¹⁸: Էսադը նույնպես հաստատել է, որ կենտրոնից ուղարկված հեռագրերին ծանոթանալուց հետո տեղական պաշտոնյաները դրանք պետք է վերադարձնեին սուրհանդակին¹⁹: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ մինչև արտասահման մեկնելը Թալեաթն իր ընկերոջ ծովափնյա առանձնատան նկուղում մեծ քանակությամբ փաստաթղթեր է այրել²⁰:

Ինչ վերաբերում է ավելի ուշ շրջանում թուրքական արխիվների մաքրագարդմանը, ապա Աքչամն ինքն է խոստովանում, որ օսմանյան վարչապետական արխիվում հայերի բնաջնջման մասին, ըստ էության, տեղեկություններ չկան ոչ միայն այն պատճառով, որ հրա-

14 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 23:

15 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 13, 183:

16 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 16-17:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 18:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

հանգները տրվել են գաղտնի և բանավոր, այլև որ այդ արխիվը ժամանակ առ ժամանակ մաքրագարդվել է²¹: Ուստի բնական է, որ օսմանյան վարչապետական արխիվի գլխավոր վարչության հրատարակած ժողովածուներում հավաքված են բացառապես Օսմանյան կայսրության ու Թուրքիայի պատմության՝ թուրքական կառավարության պաշտոնական տեսակետը հաստատող փաստաթղթերը²²:

Օսմանյան շրջանի արխիվային նյութերի կարևոր բաժիններից են երիտթուրք պարագլուխներին դատապարտած թուրքական ռազմական տրիբունալի 1919–1921 թթ. դատավարությունների արձանագրությունները: 1908–1918 թթ. եղել են տարբեր ոճիրների համար դատապարտված երիտթուրքերի 63 գործեր, որոնցից միայն 12-ի նյութերն են պահպանվել²³: Այս փաստը նույնպես հիմք է տալիս պնդելու, որ հայերի բնաջնջման մասին տեղեկություններ պարունակող գործերն առանձնացվել կամ ոչնչացվել են:

1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո Գլխավոր շտաբի Ռազմական պատմության և ռազմավարական հետազոտությունների վարչության արխիվում նույնպես իրականացվեց փաստաթղթերի մաքրագարդում: Այդ նպատակով հրավիրվել էր օսմաներեն իմացող պատմաբան, որը Գլխավոր շտաբի պատասխանատու սպաներից մեկի ներկայությամբ կարդում էր փաստաթղթերի վերնագրերը, իսկ վերջինս դրանք դասակարգում էր իբրև «վնասակար» կամ «անվնաս». «վնասակար» համարվող փաստաթղթերը ենթակա էին ոչնչացման²⁴: Հասկանալի է, որ հետազոտողների՝ այս արխիվում աշխատելու պարագայում կարող են բացահայտվել բազմաթիվ կարևոր ու հատկապես հանցագործությունների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ոչնչացման փաստեր, ինչը մեծ աղմուկ կբարձրացնի: Ինքը՝ Աբչամը, այս և թուրքական մյուս արխիվներում մաքրագարդումները հակված է դիտելու ոչ թե որպես հատուկ դիտավորությամբ կատարված գործողություններ, այլ ընդամենը որպես թուրքական իշխանությունների կողմից սեփական ժառանգության նկատմամբ

21 Տե՛ս նույն տեղում, էջ XXIX-XXX:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 33:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 7:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

անփույթ վերաբերմունք²⁵: Այդուհանդերձ, Աքչամը պնդում է, որ անգամ այդքան միտումնավոր մաքրագարություններից ու փաստաթղթերի ոչնչացումից հետո Գլխավոր շտաբի արխիվում մնացած նյութերը առատ տեղեկություններ են պարունակում, որոնք հակասում են Թուրքիայի կառավարության և նրա դաշնակիցների պաշտոնական վարկածին²⁶:

Աքչամի վկայությամբ՝ Թուրքիայում արխիվների ինստիտուցիոնալացման խոչընդոտները մինչև վերջերս վերացված չէին, և արխիվների տնօրենները ստիպված էին գործել վարչապետական հիմնարկության սահմանափակող կանոններով²⁷: Թուրքական արխիվներում հետազոտություններ կատարող մասնագետները ենթարկվում էին իրենց մտադրությունների և հետազոտման առարկայի մասին հարցաքննությունների, հաճախակի էին փաստաթղթերի տրամադրման մերժումները և նույնիսկ արխիվներից վտարումները: Թուրքիայի գլխավոր շտաբի Ռազմական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչության արխիվ²⁸ ուսումնասիրողների մուտքը խիստ վերահսկողությամբ ու քննությամբ է որոշվում: Դիմող մասնագետները ստիպված են պատասխանել մի քանի տասնյակ հարցերի, ընդհուպ՝ իրենց ազգականների՝ հանցանքներ գործած լինելու վերաբերյալ, իսկ թույլտվություն ստացածների նկատմամբ խիստ վերահսկողություն է սահմանվում նրանց՝ արխիվում գտնվելու ողջ ընթացքում²⁹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտի շրջանի թուրքական արխիվների նյութերը Հայոց ցեղասպանությունը չխտող պատմաբանների համար դժվարհասանելի, եթե ոչ անհասանելի են, զարմանալի է, որ թուրքական իշխանությունները 2006 թ. Աքչամի համար բացառություն են արել, վերջինիս խոստովանությամբ՝ **իր համար ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները**³⁰: Այստեղ է, որ հռետորական հարց է ծագում, թե Հայոց

25 Տե՛ս նույն տեղում:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 33:

28 Գլխավոր շտաբի արխիվում Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ պահվում է 3.671.470 փաստաթուղթ, որոնցում կարևոր տեղեկություններ են պարունակվում ռազմական հետախուզության, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գործակալների և հետախուզության մասին (տե՛ս նույն տեղում, էջ 14):

29 Տե՛ս նույն տեղում:

30 Տե՛ս նույն տեղում, էջ 7:

ցեղասպանությունը պաշտոնապես ժխտող և տասնամյակներ շարունակ դրա միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի դեմ հետևողականորեն պայքարող թուրքական իշխանություններն ինչու պետք է նման բարեհաճ վերաբերմունք ցուցաբերեն այդ հանցագործությունը հրապարակայնորեն ճանաչող ու դատապարտող թուրք պատմաբանի նկատմամբ:

Ասվածի լույսի ներքո առնվազն տարօրինակ է հնչում Երուսաղեմի հայոց պատրիարքության հասցեին հնչեցված Աքչամի այն քննադատությունը, թե իրեն թույլ չի տրվել ուսումնասիրել այնտեղի արխիվում պահվող Ուլիսների հետաքննության հանձնաժողովի³¹, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության հաղորդագրությունների փաստաթղթերի պատճենները: Այդուհանդերձ, նա շնորհակալություն է հայտնում Վ. Դադրյանին, ով իրեն Երուսաղեմի պատրիարքարանի արխիվային վավերագրերի հետ աշխատելու հնարավորություն է տվել՝ փոխանցելով այնտեղ պահվող որոշ փաստաթղթերի պատճեններ³²: Համադրելով թուրքական աղբյուրներում ու արխիվային նյութերում և Երուսաղեմի պատրիարքարանի արխիվում պահվող Թալեաթ փաշայի 1915 թ. մայիսի 23-ի և 26-ի հեռագրերը՝ Աքչամը հանգում է այն եզրակացությանը, որ դրանք նույնական են³³: Թուրքական արխիվների վերաբերյալ Աքչամի դատողություններից տպավորություն է ստեղծվում, որ նա իր առջև նպատակ է դրել ամեն կերպ հետաքրքրություն առաջացնելու օսմանյան (թուրքական) արխիվների նկատմամբ, փորձել է փարատել դրանց հանդեպ տասնամյակների ընթացքում օբյեկտիվորեն ձևավորված անվստահությունը և հետազոտողներին ուղղորդել դեպի այդ արխիվները, որոնցում իրական փաստաթղթերն ամբողջությամբ կամ մասամբ կեղծվածներից տարբերելը չափազանց բարդ է:

31 Հանձնաժողովը ձևավորվել է 1918 թ. նոյեմբերի 24-ին՝ Սուդրոսի զինադադարից հետո, և զբաղվել հայերի տեղահանություններին ու կոտորածներին վերաբերող վկայություններ հավաքելու, ինչպես նաև կասկածյալներին հարցաքննելու հարցերով՝ նպատակ հետապնդելով այդ նյութերի հիման վրա մեղավորներին ենթարկելու քրեական պատասխանատվության: Հանձնաժողովի փաստաթղթերի բնօրինակները կորել են, սակայն ռազմական տրիբունալներում աշխատած որոշ հայ պաշտոնյաներ ձեռագիր պատճենել են թղթապանակների որոշ փաստաթղթեր, որոնք հետագայում հայտնվել են Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում (տես նույն տեղում, էջ 9-10):

32 Տես նույն տեղում, էջ 10:

33 Տես նույն տեղում, էջ 10-11:

2. Հայոց ցեղասպանության իրականացման շարժառիթների և կանխամտածվածության վերաբերյալ Աքչամի մոտեցումները

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության դրվագները Աքչամը փորձում է դիտարկել ամեն գնով կայսրության պահպանմանը ձգտող՝ «**կայսերապաշտական**» և օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդների անկախությանը ձգտող՝ «**ազգ-պետություն**» միմյանց հակադրվող հայեցակարգերի համատեքստում³⁴: Առաջին մոտեցման առնչությամբ թուրք հեղինակը գրում է. «Մահմեդական թուրքերը սկսեցին հավատալ, որ իրենց հանրապետությունը (սկստի ունի 1908 թ. հեղաշրջումից հետո հաստատված կարգերը – Ա. Մ.) հիմնադրել են մեծ պետությունների և նրանց դավաճան գործակիցների՝ օսմանյան քրիստոնյաների հետ կենաց ու մահու պայքարի արդյունքում, և որ վերջիններիս միակ նպատակը օսմանյան պետությունն ու մահմեդական թուրքերին աշխարհիս երեսից ջնջելն է»³⁵: Այս մոտեցումը «հիմնավորելու» համար Աքչամը մեջբերում է անում Յու. Բայուրի աշխատությունից. «...մի բան է ասել, թե թուրքերը հայերին սպանել են տարերայնորեն, և մեկ այլ բան է ասել, թե երբ հայերն ապստամբեցին, թուրքերը, որոնք գտնվում էին կենաց ու մահու պայքարի փակուղու մեջ, անհամաչափ ուժ գործադրեցին և անհամաչափ ու շատ մարդ սպանեցին»³⁶: Դժվար չէ նկատել, որ Բայուրի գրքից մեջբերված հատվածի առաջին մասում իսպառ բացառվում է թուրքերի կողմից հայերի սպանությունների կանխամտածված լինելը՝ դրանց տալով «տարերային» որակումը, իսկ երկրորդ հատվածում փորձ է արվում հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելու հենց գոհերի վրա՝ նշելով, որ հայերի կոտորածներն իրականացվել են ի պատասխան, այսպես ասած, «ապստամբության», և «կենաց մահու» պայքարի մեջ գտնվող թուրքերը վերջիններիս նկատմամբ ընդամենը անհամաչափ ուժ են կիրառել:

34 Տե՛ս նույն տեղում, էջ X-XI:

35 Նույն տեղում, էջ XI:

36 Նույն տեղում:

Աքչամը փորձում է արդար դատավորի դեր ստանձնել «կայսերապաշտական» և ոչ թուրք ազգային ու կրոնական խմբերի «ազգ-պետության» հայեցակարգերի միջև: Նա գիտակցաբար խուսափում է Բեռլինի վեհաժողովի՝ կոնկրետ հայերին վերաբերող ընդամենը բարենորոգումների մասին 61-րդ և 62-րդ հոդվածների քննարկումից, որոնք «ազգ-պետություն» հայեցակարգի հետ որևէ աղերս չունեն. խոսքն ընդամենը հայերի նվազագույն իրավունքների ապահովման երաշխիքների մասին էր³⁷:

Հեղինակն առաջ է քաշում այն թեզը, թե Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանում, ազգային-կրոնական միատարրացման, այսինքն՝ քրիստոնյաների թրքացման քաղաքականությունը երիտթուրքական իշխանությունները սկսել են գործադրել 1912-1913 թթ. բալկանյան պատերազմներում իրենց ջախջախիչ պարտությունից հետո, և «մինչ այդ օսմանյան իշխանությունները ներգաղթի ու վերաբնակեցման խնդիրը միշտ լուծել են պահին արձագանքելով՝ ժամանակավոր միջոցներով»³⁸: Հավանաբար նկատի ունենալով Հայկական հարցի միջազգայնացումը՝ Աքչամը տասնամյակներ շարունակ Արդուլ Համիդի վարչակարգի՝ Արևմտյան Հայաստանը քրդերով ու մուհաջիրներով վերաբնակեցնելու վարչաժողովրդագրական խտրական քաղաքականությունը համարում է «ժամանակավոր միջոց», որը 1890-ականներին հանգեցրեց իրենց հայրենիքում տեղաբնիկ հայերի զանգվածային կոտորածներին³⁹: Այս կապակցությամբ պետք է նշել, որ բալկանյան պատերազմներում թուրքերի կրած պարտությունն ընդամենը լրացուցիչ խթան հանդիսացավ հայերի դեմ իրականացվող քաղաքականությունն ավելի արմատական, ցեղասպանական գործողություններով շարունակելու համար:

Թուրք պատմաբանը կարևոր արձանագրում է կատարում, որ երիտթուրքերի քաղաքականության մեջ հստակ տարբերակում է եղել հայերի և քրիստոնյա մյուս համայնքների նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքում, և հայերի տեղահանությունը պայմանավորված չի եղել ռազմական անհրաժեշտությամբ կամ պատերազ-

37 Տե՛ս **Մարուցյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 60-61:

38 **Աքչամ Թ.**, նշվ. աշխ., էջ 37-38:

39 Տե՛ս **Սպիրով Դ. Ա.**, Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.), Եր., 1997, էջ 38-41:

մով, այլ նպատակ է ունեցել, Թալեաթի խոսքերով, «Հայկական հարցը վերացնել այնպես, որ դա լինի սպառիչ ու բացարձակ»⁴⁰: Այս ամենով հանդերձ՝ հայերի բնաջնջման թուրքական իշխանությունների որոշումը Աքչամը հակված է դիտարկելու վերջիններիս պարտություններից հետո արևելյան նահանգներում ստեղծված ծանր պայմանների և էթնիկ զտումների համատեքստում, որոնք, թուրք պատմաբանի պատկերացմամբ, «հայկական բարենորոգումների հին հարցը փոխակերպեցին օսմանյան պետության համար անվտանգային ճակատագրական հարցի»⁴¹: Այսպիսով՝ Աքչամը համերաշխվում է Թուրքիայի պաշտոնական տեսակետն արտահայտող պատմաբանների հետ, համաձայն որի՝ հայկական բարենորոգումներն իբրև թե սպառնալիք էին Օսմանյան կայսրության ամբողջականության համար, ինչից հետևում է, որ բարենորոգումների շահառուներին՝ հայերին բնաջնջելու քաղաքականությունը արդարացված էր: Այս համատեքստում Աքչամը խուսափում է քննարկել այն հարցը, թե հայերն իրենց կյանքի ու գույքի պաշտպանության համար Օսմանյան կայսրությունում բարենորոգումներ իրականացնելու պահանջ ներկայացնելու իրավունք առհասարակ ունեի՞ն, թե՞ ոչ: **Ինչպես թուրքական պաշտոնական պատմագրության մեջ, այնպես էլ Աքչամի պատկերացումներում հայերի՝ Օսմանյան կայսրությունում բարենորոգումներ իրականացնելու ցանկությունը կամ պահանջը հավասարեցվում է հանցանք կատարելուն, ինչի համար ցեղասպանության ենթարկելու միջոցով նրանց «պատժելը» փաստորեն համարվում է օրինաչափ:**

Այս լույսի ներքո ամենևին պատահական չէ, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու մասին 1914 թ. հունվարի 26/փետրվարի 8-ի ռուս-թուրքական պայմանագիրն Աքչամը փորձում է ներկայացնել որպես կայսրության փլուզմանը միտված քայլ⁴²: Հիշյալ պայմանագրին անշուշտ քաջածանոթ թուրք պատմաբանը, անգամ չանդրադառնալով դրա բովանդակությանը, ակնարկում է, թե դրանով նախապատրաստվում էր Արևմտյան Հայաստանում անկախ հայկական պետության ստեղծումը⁴³: Իրականում

40 Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 157:

41 Նույն տեղում, էջ 158:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 164:

43 Տե՛ս նույն տեղում, էջ XXI:

Ենթադրյալ պայմանագրով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու հատվածների, որոնցում նշանակված եվրոպացի վերատեսուչներն իրականացնելու էին փաստաթղթով նախատեսված բարենորոգումներ՝ նպատակ ունենալով այդ տարածքներում հավասարեցնելու հայերի և մահմեդականների իրավունքները⁴⁴: Ըստ Աքչամի՝ եթե թուրքական իշխանություններն իսկապես այդ պայմանագիրը կայսրության համար նման սպառնալիք էին համարում, ապա կարող էին հրաժարվել դրա ստորագրումից, առավել ևս, որ մոտավորապես համաշխարհային պատերազմից առաջ Գերմանիան ակտիվորեն սատարում էր նրանց, և հենց վերջինիս աջակցությամբ թուրքական կողմը զգալի փոփոխություններ կատարեց Ռուսաստանի ներկայացրած նախագծում⁴⁵: Պայմանագրի ստորագրումից հետո էլ Բարձր դուռն ամեն կերպ ձգձգում էր ստանձնած պարտավորությունների կատարումը, մինչև սկսվեց Առաջին աշխարհամարտը, որն էլ ֆորս-մաժոր («անհաղթահարելի ուժ») հանդիսացավ դրա իրագործման համար, իսկ հետո էլ այն ընդհանրապես չեղարկվեց⁴⁶:

Ավելին՝ Աքչամը հատուկ առանձնացնում է օսմանյան այն վավերագրերը, որոնցում երիտթուրքերը հայ գործիչներին հորդորում էին հեռու մնալ մեծ տերություններից և բարենորոգումներ չպահանջել՝ զգուշացնելով, որ հակառակ դեպքում կկոտորեն ողջ հայ բնակչությանը⁴⁷: Նմանօրինակ փաստարկները որպես Հայոց ցեղասպանության շարժառիթ դիտարկելով՝ թուրք պատմաբանը փաստացի հանգում է թուրքական պաշտոնական այն մոտեցմանը, թե հայերն իրենք էին մեղավոր, որ կոտորվեցին, քանզի իբր ապավինել էին եվրոպական տերություններին⁴⁸:

Հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանական քաղաքականությունը 1914 թ. ռուս-թուրքական պայմանագրով «բացատրելը» և թուրքերի կողմից իբրև հարկադրված քայլ ներկայացնել-արդարացնելն ընդհանրապես քննադատության չի դիմանում, քանզի նման փորձնական գործողություն երիտթուրքերն առաջին անգամ

44 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբ. **Զ. Կիրակոսյան**, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 349-350:

45 Տե՛ս նույն տեղում, էջ 347:

46 Տե՛ս **Մարուքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 80:

47 Տե՛ս **Աքչամ Թ.**, նշվ. աշխ., էջ 165-166:

48 Տե՛ս **Гамелен А., Брон Ж.-М.**, Восстановленная память, Ер., 1995, էջ 89:

իրականացրել էին իրենց՝ իշխանության գալուց ամիսներ անց՝ 1909 թ. ապրիլին՝ Ադանայում և Կիլիկիայում կոտորելով շուրջ 30.000 հայերի⁴⁹:

Ընդունելով այն տեսակետը, թե թուրքական իշխանությունների համար հայկական բարենորոգումները սպառնալիք էին, և արհեստականորեն ուռձացնելով Օսմանյան կայսրության համար դրանց «վտանգները»՝ Աքչամը, փաստորեն, քողարկված ձևով փորձում է առաջ մղել Հայոց ցեղասպանության ժխտման և նենգափոխման՝ թուրքական պաշտոնական պատմագրության թեզերը և ըստ այդմ արդարացնել հայերի նկատմամբ իրագործված բնաջնջման քաղաքականությունը: Այս առումով կարծում ենք, որ նա ավելի ազնիվ կգտնվեր, եթե պարզապես համաձայներ թուրքական պաշտոնական պատմագրության՝ Հայոց ցեղասպանությունը ժխտող «պատերազմական անհրաժեշտության»⁵⁰ թեզի հետ, քան թե առերևույթ ճանաչեր հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը, բայց միևնույն ժամանակ փորձեր շրջանառել այն կասկածի տակ դնող նման մոտեցումները:

Աքչամը Հայոց ցեղասպանության շարժառիթների առնչությամբ Վ. Դադրյանի առաջադրած՝ «թուրքական պետության ցեղասպանական ենթամշակույթի» և «ռասայական գաղափարախոսության հիման վրա հակամարտությունները բռնությամբ լուծելու թուրքերի հակումների»⁵¹ մասին հարցադրումները փորձում է հակադրել «ցեղասպանության՝ կործանման եզրին գտնվող կայսրության նախաձեռնած դիպվածային իրադարձություն» լինելու մասին Ռ. Սյունու տեսակետին, համաձայն որի՝ զանգվածային կոտորածները իբր կայսրությունը վերակենդանացնելու և ընդլայնելու երիտթուրքերի վերջին հուսահատ ջանքն էին, և դա հայերի նկատմամբ թուրքերի ռասայական կամ կրոնական ատելության կամ ռազմատենչ ազգայնականների երկարատև ծրագրման արդյունք չէր⁵²: Աքչամն ակնհայտորեն հետին մտքով է վկայակոչում թուրքական պատմագրության նման վարկած-

49 Տե՛ս Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009, էջ 33:

50 Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквозь призму десятилетий, Ер., 1995, с. 53.

51 Dadrian V. N., The Convergent of the State and a Governmental Party in the Armenian Genocide in Studies in Comparative Genocide, ed. L. Chorbajian, G. Shirinian, London, Macmillan, New York, St. Martin's Press, 1999, p. 92-125.

52 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 158-159:

ները գրեթե նույնությամբ վերարտադրող Ռ. Սյունուն: Հայոց ցեղասպանության շարժառիթների վերաբերյալ երկու հայ հեղինակների իրարամերժ մոտեցումները միմյանց հակադրելու «հնարքով» հեղինակը փորձում է տպավորություն ստեղծել, թե տվյալ հարցում միակարծիք չեն անգամ հայ հետազոտողները: Կատարված հանցագործության կանխամտածվածության շուրջ արհեստական «քանավեճ» ծավալելու միջոցով թուրք պատմաբանը ձգտում է կասկածներ առաջացնելու հայ ժողովրդի նկատմամբ իրագործվածը «ցեղասպանություն» որակելու հարցում, քանզի ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համաձայն՝ ռասայական, կրոնական, ազգային կամ էթնիկ խմբին ոչնչացնելու հանցավոր մտադրության առկայությունը, այսինքն՝ դրա կանխամտածվածությունը, տվյալ հանցագործության որակման կարևոր, եթե ոչ վճռորոշ բաղադրատարրն է⁵³:

Արջամը նշում է, որ թեև մայրաքաղաքից կայսրության տարբեր ծայրամասեր ուղարկված «գաղտնի» և «հույժ գաղտնի» հեռագրերը կարևոր ապացույցներ են պարունակում իշխող կուսակցության և կառավարության պաշտոնյաների հանցավոր մտադրությունների վերաբերյալ, սակայն, ըստ նրա, դեռևս ամբողջությամբ պարզ չէ, թե կայսրության տարբեր նահանգներում և գավառներում ինչպես և ինչ պայմաններում են դրանք կատարվել⁵⁴: Ասել է թե՛ կենտրոնից ուղարկված հեռագրերի առկայությունը դեռևս չի նշանակում, թե դրանցում նշված հայերի ոչնչացման հրամանները տեղերում ստուգությամբ կատարվել են: Այս առումով ստիպված ենք հիշեցնել, որ 1913 թ. հունվարի հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի ամբողջատիրական կառավարման համակարգ էր հաստատվել⁵⁵: Պատերազմի մեջ մտնելուց հետո, երբ կայսրությունում արտակարգ և պատերազմական դրություն հայտարարվեց, կասեցվեց խորհրդարանի գործունեությունը, և վերջինիս լիազորությունները փոխանցվեցին կառավարությանը, երկրում հաստատվեցին բռնատիրական կարգեր⁵⁶: Նման պայմաններում տեղական պաշտոնյաների

53 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 2002, էջ 780:

54 Տե՛ս Արջամ Թ., նշվ. աշխ., էջ XXVIII:

55 Տե՛ս Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Ер., 1999, էջ 10:

56 Տե՛ս Տատրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները: Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Եր., 2005, էջ 11:

կողմից կենտրոնից ստացված հրամանների չկատարման մասին խոսելն ավելորդ է: Անշուշտ, եղել են եզակի դեպքեր, երբ, օրինակ, Անկարայի, Կաստանոնուի նահանգապետերը և Յողզաթի գավառապետը հրաժարվել են հայերի զանգվածային բնաջնջման հրամանը կատարելուց, ինչից հետո անմիջապես հեռացվել են իրենց զբաղեցրած պաշտոններից⁵⁷: Նրանց փոխարեն նշանակվել են նոր պաշտոնյաներ, որոնք, նախկինների ճակատագրից ելնելով, հստակորեն կատարել են կենտրոնից եկող հրահանգները:

Աքչամը փորձում է իբրև փաստարկ բերել նաև մինչև 1913 թ. ռազմական հեղաշրջումը երիտթուրքերի դիմագրաված բարդ կացությունը՝ հիմնավորելու այն թեզը, թե «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայերի բնաջնջման որոշում չի ունեցել և պատեհ առիթի չի սպասել այն իրագործելու համար⁵⁸: Քաջ հայտնի է, որ հայերի զանգվածային բնաջնջման երիտթուրքական ծրագիրն առաջին անգամ քննարկվել է դեռևս 1911 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Սալոնիկում կայացած «Միություն և առաջադիմություն» կուսակցության IV համագումարի նիստերի ընթացքում: Համագումարի փակ նիստում հավանության արժանացավ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի և հույների բռնի թուրքացման ծրագիրը, որով, ի թիվս այլ միջոցների, նախատեսվում էր նաև այդ բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը ձանապարհին կամ վերաբնակեցման վայրերում⁵⁹: Ինչ վերաբերում է Աքչամի այն ակնարկներին, թե տվյալ շրջանում հայ քաղաքական ուժերն ու առանձին գործիչներ շփումներ են ունեցել և համագործակցել երիտթուրքերի հետ⁶⁰, ապա դրանով ոչ միայն չի ժխտվում, այլև հաստատվում է հայերին ցեղասպանելու երիտթուրքերի հանցավոր մտադրությունը, քանզի նման շփումներով երիտթուրքերը փորձում էին բթացնել հայերի զգոնությունը՝ պատեհ առիթ ներկայանալու դեպքում իրենց նախապես ծրագրածն իրականացնելու համար: Պատահական չէ, որ կառավարության 1914 թ. օգոստոսի 28-ի որոշման հիման վրա Թալեաթը սեպտեմբերի 6-ի հեռագրով նահանգապետերին հրահանգում էր հետևել հայ քաղաքական կուսակցությունների

57 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 243-244:

58 Տե՛ս Նոյն տեղում, էջ 173-175:

59 Տե՛ս Авакян А., նշվ. աշխ., էջ 15-16:

60 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 173-174:

անդամների գործունեությանը՝ պատրաստ լինելով նրանց ձեռքակալմանը⁶¹:

Այսպիսով՝ **օսմանյան արխիվներից մեջբերվող փաստաթղթերով Աքչամը փաստորեն ապացուցում է, որ հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործողությունները հետևողական քաղաքականության արդյունք էին, սակայն հրաժարվում է կատարել դրանից բխող այն ակնհայտ եզրակացությունը, որ դրանք նախապես ծրագրված էին:**

3. Հայոց ցեղասպանության իրականացման գործում թուրքական պետության պատասխանատվության մասին վկայող՝ օսմանյան բանակի ներգրավվածության վերաբերյալ Աքչամի տեսակետները

Ինչպես հայտնի է, Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելուց առաջ ամբողջ երկրում համատարած գորահավաք էր հայտարարվել, և, մահմեդականներից բացի, օսմանյան բանակ էին զորակոչվում նաև քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ, հայ տղամարդկանց բանակ զորակոչելով, թուրքական իշխանությունները, ըստ էության, իրականացնում էին ցեղասպանության առաջին փուլը. նրանց օսմանյան բանակի տարբեր ստորաբաժանումներում ոչնչացնելով նպատակ էին հետապնդում հայ բնակչությանը զրկելու ինքնապաշտպանվելու հնարավորությունից:

Դեռ պատերազմը չսկսած՝ սեպտեմբերի 23/24-ով թվագրված թիվ 347 շրջաբերականում նշվում էր, որ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորները հնարավորինս պետք է առանձնացվեն մահմեդականներից, իսկ թուրքական իշխանությունների դեմ գործելու դեպքում պետք է անմիջապես ուժով ձնշվեն, իսկ դիմադրողները՝ սպանվեն⁶²: Ընդունելով հանդերձ, որ «բոլոր դեպքերում առաջին սպանվողները պետք է լինեին այն հայերը, որոնք ընդգրկված էին բանակում»⁶³, Աքչամը փորձում է հիմնավորել այն թեզը, թե օսմանյան բա-

61 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

62 Տե՛ս նույն տեղում, էջ 188:

63 Նույն տեղում:

նակում հայ տղամարդկանց սպանությունները ոչ թե կանխորոշված ծրագրի առաջին քայլերն էին, այլ «ժամանակավոր միջոցառումներ»⁶⁴: Մինչդեռ տվյալ փաստաթուղթն արդեն իսկ վկայում է, որ հայ տղամարդկանց կոտորելը երիտթուրքերի ցեղասպանական քաղաքականության առաջին փուլն էր, առանց որի՝ հաջորդ փուլերի իրականացումը պարզապես հնարավոր չէր: **Փաստորեն, Աքչամը փորձում է կասկածի տակ դնել թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ծրագրված լինելը, ինչպես նաև հաջորդական փուլերով իրագործված հանցավոր քաղաքականության իրողությունը:**

Հայերի տեղահանություններում և զանգվածային կոտորածներում օսմանյան բանակի մասնակցության և դրանցում ներգրավվածության աստիճանի հարցն Աքչամը բանավեճի առարկա է համարում⁶⁵: Նման սկզբունքային հարցում պատմաբանի այս դիրքորոշումը, անշուշտ, հնարավոր չէ պատահական համարել, քանզի հայերի նկատմամբ կատարված հանցագործություններում Օսմանյան կայսրության պետական կարևորագույն ինստիտուտներից մեկի՝ օսմանյան բանակի մասնակցության արձանագրմամբ փաստացի հաստատվում են Հայոց ցեղասպանության թե՛ կանխսամտածվածությունը և թե՛ թուրքական պետության պատասխանատվությունը:

Հատկանշական է, սակայն, որ Աքչամի մեջբերած օսմանյան արխիվային վավերագրերը ճիշտ հակառակն են փաստում: Էնվերի 1915 թ. ապրիլի 25-ի հատուկ հաղորդագրությամբ բանակային հրամանատարությանը կարգադրվում էր հայ գործիչներին կալանավորելու հարցով կապի մեջ լինել քաղաքական պաշտոնյաների հետ և այդ գործում ցանկացած օժանդակություն ցույց տալ նրանց⁶⁶: Թուրքական 3-րդ և 4-րդ բանակների հրամանատարները ներգրավված են եղել Վանի ու Բիթլիսի նահանգներում հայ գործիչներին ձերբակալելու գործում⁶⁷:

Օսմանյան բանակը ներգրավված է եղել նաև հայերին գինաթափելու գործում: 1915 թ. ապրիլի 26-ին կառավարության ընդունած ժամանակավոր օրենքով նախատեսվում էր ոչ մահվնազատական հա-

64 Նույն տեղում, էջ 172:

65 Տե՛ս նույն տեղում:

66 Տե՛ս նույն տեղում, էջ 234:

67 Տե՛ս նույն տեղում, էջ 237:

մայնքների և մասնավորապես հայերի ձեռքում եղած զենքի բռնագրավում՝ հատուկ շեշտելով, որ դա մահմեդականներին չի վերաբերում⁶⁸: Հուլիսի 3-ին Պատերազմական նախարարությունը բանակային ստորաբաժանումների հրամանատարներին կարգադրեց քրիստոնյաներից հավաքել զինամթերքն ու պայթուցիկ նյութերը⁶⁹: Ինքնին հասկանալի է, որ, զենք-զինամթերք հավաքելուն զուգահեռ, օսմանյան բանակը զբաղվել էր նաև ոչ մահմեդականների և առաջին հերթին հայերի զանգվածային կոտորածներ իրականացնելով:

Սարիղամիշում կրած ծանր պարտության պատասխանատվությունը թուրքական հրամանատարությունը փորձում էր բարդել հայերի վրա՝ նրանց առաջադրված դավաճանության կեղծ մեղադրանքները որպես հիմք ծառայեցնելով զանգվածային տեղահանությունների և բնաջնջման գործընթացը սկսելու համար⁷⁰: Սարիղամիշի պարտությունից անմիջապես հետո՝ 1915 թ. փետրվարի 25-ին, Էնվեր փաշայի գաղտնի հեռագրում նշվում էր, թե բանակից փախած հայ զինվորների խմբերն իբր ավազակություններ են արել Բիթլիսում, Հալեպում և Դյորթոլում, հարձակումներ իրականացրել զինվորական անձնակազմի և ժանդարմերիայի վրա, իսկ Կեսարիայում՝ հայերի տներում, ռումբերի մեծ պահեստ է հայտնաբերվել⁷¹: Այս կերպ պատերազմական նախարարը փորձում էր հայերին քավության նոխազ դարձնել՝ իր ապաշտրի հրամանատարության հետևանքով թուրքական երրորդ բանակի ջախջախումը և ռազմաճակատային գծի ձեղքումն արդարացնելու համար:

Բնական է, որ հայ զինվորներին դավաճանության և դասալքության⁷² կեղծ մեղադրանքներ ներկայացնելուն հետևելու էր նրանց զինաթափելու, զինվորական շտաբներում զբաղեցրած պաշտոններից ազատելու հրամանը, ինչից հետո հայերը սկսեցին զանգվածաբար հեռացվել ոչ միայն բանակային ստորաբաժանումներից, այլև ժանդարմերիայից⁷³: Եթե թուրքական իշխանություններն իսկապես

68 Տե՛ս նույն տեղում, էջ 234-235:

69 Տե՛ս նույն տեղում, էջ 235:

70 Տե՛ս նույն տեղում, էջ 198:

71 Տե՛ս նույն տեղում:

72 Պետք է հատուկ նշել, որ թուրքական բանակի հրամանատարության հեռագրերում հաճախակի հիշատակվող «դասալիքները» միայն և բացառապես հայազգի զինվորներ չէին: Սարիղամիշի պարտությունից և մեծ կորուստներից հետո օսմանյան բանակից տարբեր ազգությունների և կրոնների տասնյակ հազարավոր զինվորներ էին փախչում:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 198-199:

ցանկանային ճշտել էնվերի մեղադրանքների իսկությունը և հաստատվելու դեպքում պատժել մեղավորներին, ապա հետաքննություն անցկացնելը դժվար չէր, սակայն տվյալ քարոզչական հնարքով նպատակ էր հետապնդվում մահմեդականների շրջանում հայերի նկատմամբ սերմանելու կասկած և անվստահություն՝ այդպիսով «լեգիտիմ հիմքեր» ստեղծելով վերջիններիս «պատժելու»⁷⁴ համար:

Այդ ամենին հետևում է 1915 թ. ապրիլի 22-ին թուրքական երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի՝ Սեբաստիայում և Վանում հայերի՝ ապստամբություն բարձրացնելու մասին հեռագիրը, որում առաջարկվում էր խստությամբ պատժել և տեղահանել «դավաճան» հայերին⁷⁵: Երիտթուրքերի շրջանում հայերի ենթադրյալ ապստամբության իբր թե հարուցած վախերը Աքչանը մեկնաբանում է այնպես, թե իբր դա հանգեցրել է հայերի նկատմամբ նրանց քաղաքականության փոփոխությանը⁷⁶: Իրականում, սակայն, դա քարոզչական նպատակով հորինվել էր հենց կենտրոնական իշխանությունների կողմից: Մինչդեռ Էրզրումի, Բիթլիսի և Խարբերդի նահանգապետերի պատասխան գեկուցագրերով հաստատվում է, որ հայ բնակչության շրջանում հեղափոխական գործունեության մասին լուր կամ վկայություն չկա⁷⁷: Ուրեմն ակնհայտ է, որ հայերի՝ ապստամբություն բարձրացնելուց թուրքական իշխանության «վախերը» չէին կարող հիմք ծառայել հայերի նկատմամբ քաղաքականության փոփոխության համար, ինչպես փորձում է ներկայացնել Աքչանը, քանզի այդ քաղաքականությունն արդեն իսկ ծրագրված և որոշված էր:

Պատճառաբանելով, թե հայերի գործողությունների հետևանքով կտրվում է բանակի մատակարարումը, հրամանատարությունն առաջարկում էր հայերին տեղահանել և վերաբնակեցնել Հալեպի և

74 Որպես կանոն, ցեղասպանություն հանցագործությանը նախորդում է «վիկտիմիզացիայի» կամ, այսպես կոչված, «գոհաբերության» գործընթացը, որի միջոցով հանցավոր վարչակարգը թիրախավորում է էթնիկ, կրոնական կամ ազգային պատկանելությամբ տարբերվող գոհ-խմբին՝ քարոզչության միջոցով վերջինիս ներկայացնելով որպես պետության համար սպառնալիք և դրանով երկրի հասարակությանը նախատրամադրելով նրա ոչնչացման ոչ միայն անխուսափելիությանը, այլև անհրաժեշտությանը (տես **Harf B.**, *Rescuing Endangered Peoples: Missed Opportunities*, Social Research. An International Quarterly of the Social Sciences, N.Y., 1995, Spring, էջ 24): Ցեղասպանության ենթակա գոհ-խմբից թշնամու կերպար կերտելու հաջորդ քայլը «դահճի» հանցագործությունն իրականացնողի ի հայտ գալն է, որի դերում հանդես է գալիս մեկ այլ էթնիկ կամ կրոնական խումբ, որը, ակտիվորեն մասնակցելով գոհ-խմբի ոչնչացմանը, փաստացի դառնում է հանցավոր վարչակարգի հանցակիցը (տես **Հովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտական հայեցակարգային համակարգում, Եր., «Զանգակ-97», 2002, էջ 18):

75 Տես **Աքչան Թ.**, նշվ. աշխ., էջ 199-200:

76 Տես նույն տեղում, էջ 219:

77 Տես նույն տեղում, էջ 213-215:

Մոսուլի շրջաններում⁷⁸: Աքչամն ընդունում է, որ դասալիքների հետ բանակային ստորաբաժանումների բախումներում հայ բնակչությունը ներգրավված չի եղել, և դրանք կազմակերպված ապստամբություն չեն եղել⁷⁹, այդուհանդերձ, այդ հիմնավորմամբ այնպիսի դաժան միջոցներ են կիրառվել քաղաքացիական բնակչության նկատմամբ, որ Պոլսի հայոց պատրիարքը թուրքական իշխանություններին բողոքի նամակ է ուղարկել⁸⁰:

Պատահական չպետք է համարել, որ Թալեաթի՝ կառավարությանը ներկայացրած «Տեղահանության մասին» օրենքում նույնությամբ կրկնվում էին հայերի ենթադրյալ «դավաճանության» մասին շինծու մեղադրանքները, որոնց վերաբերյալ անգամ կասկածներ առաջանալու դեպքում օրենքը տեղական իշխանության մարմիններին և բանակի հրամանատարությանն իրավունք էր վերապահում ռազմական ուժ կիրառելու, այսինքն՝ բնաջնջելու կամ տեղահանելու գյուղերի և ավանների ողջ բնակչությանը⁸¹: Այս և նմանաբնույթ այլ գեկուցագրերի և որոշ նահանգներից հայերի տեղահանության միջև կապի առկայության հարցի քննարկումն Աքչամը թողնում է այլ հետազոտողների⁸²: Սրանով թուրք պատմաբանը փաստորեն խուսափում է համադրել հայերի զանգվածային կոտորածների համար «օրենսդրական հիմքեր» ստեղծող «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքում և Ներքին գործերի նախարարության ու հրամանատարների հեռագրերում տեղ գտած նույնաբովանդակ ձևակերպումները, ինչը թույլ է տալիս խոսել դրանց միջև պատճառահետևանքային կապի առկայության մասին:

4. Աքչամի դատողությունները տեղահանությունների ընթացքում «5-10 %-ի սկզբունքի» և «սոցիալական ինժեներության» կիրառման մասին

1915 թ. փետրվարին Դյորթյուլից սկսված հայերի առաջին տեղահանության վերաբերյալ օսմանյան և գերմանական փաստա-

78 ՏԵՍ նույն տեղում, էջ 201-202:

79 ՏԵՍ նույն տեղում, էջ 205:

80 ՏԵՍ նույն տեղում:

81 ՏԵՍ **Baghdjian K. K.**, The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, էջ 36:

82 ՏԵՍ նույն տեղում, էջ 203:

թղթերի հիման վրա կարծիք է արտահայտվում, թե իբր տեղի հայերն արտասահմանի հայկական կազմակերպությունների միջոցով կապ էին հաստատել բրիտանացիների հետ, որոնք պատրաստվում էին ավի իջնելու Իսկենդերունում, ինչն էլ իբր առիթ ծառայեց նրանց տեղահանության համար⁸³: Աքչամը նշում է, որ բրիտանացիները այդ առաջարկը լուրջ չընդունեցին և հրաժարվեցին Իսկենդերունում կամ դրա շրջակայքում նավեր ավի հանելու գաղափարից⁸⁴: Բացառապես թուրքական ու գերմանական փաստաթղթերից քաղված և այլ աղբյուրներով չհաստատվող այս տեղեկություններն արժանահավատ համարվել չեն կարող: Ակնհայտ է, որ Կիպրոսում թուրքական 4-րդ բանակի ուժերի ոչնչացումից հետո թուրքերն ու գերմանացիները մտահոգված էին բրիտանացիների հետագա գործողություններով և կարող էին նրանց հետ հայերի հնարավոր համագործակցության մասին ապատեղեկատվություն տարածել: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Աքչամի հիշատակած համագործակցությունն իրականում հաստատվել էր Պաղեստինի հրեական համայնքի հետ, երբ բրիտանացիների հետ համագործակցության մտավախությունից ելնելով՝ թուրքական իշխանությունները որոշ ժամանակ սկսեցին հետապնդել նաև հրեաներին⁸⁵: Այդ դեպքերից հետո սիոնիստական կազմակերպությունների միջոցով բրիտանացիները Արոնսոն եղբայրների գլխավորությամբ Պաղեստինում ստեղծեցին «Նիլի» կոչվող հետախուզական ցանցը, որը գործեց 1915–1917 թթ.⁸⁶:

Աքչամը փորձում է հիմնավորել այն թեզը, որ Ներքին գործերի նախարարության կողմից հայերի տեղահանության հրահանգներն ու «Հատուկ կազմակերպության» կողմից տեղահանվողների կոտորածները միմյանց հետ չկապակցված գործողություններ էին⁸⁷: Շահարկելով «Հատուկ կազմակերպության»՝ ոչ պաշտոնական կառույց լինելու հանգամանքը, որի միջոցով համակարգվում էին տեղահանվող հայերի կոտորածները, փորձ է արվում այդ հանցագործությունների պատասխանատվությունը հեռացնելու պետական կա-

83 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 224-226:

84 Տե՛ս նույն տեղում, էջ 226:

85 Տե՛ս Աուրոն Զ., Անընդունելի անտարբերություն. Սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը, Եր., 2013, էջ 261-278:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 109-132, 259-295:

87 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 241:

ռույցից՝ Ներքին գործերի նախարարությունից, որն իբր զբաղված էր բացառապես տեղահանությունների կազմակերպմամբ: Այս առումով Աբջանը բազում փաստեր է մեջբերում «Հատուկ կազմակերպության» համակարգող և ղեկավար Բեհաեդդին Շաքիրի կազմակերպած հանցագործությունների վերաբերյալ⁸⁸, այդ թվում՝ ռազմական տրիբունալում երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշայի ցուցմունքը⁸⁹: Աբջանը դիտավորյալ շրջանցում է այն փաստը, որ պատերազմի նախօրյակին իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայերի բնաջնջման գործընթացը կազմակերպելու նպատակով էր ստեղծել «Հատուկ կազմակերպություն» ռազմականացված կառույցը, որի գործունեությունը վերահսկվում և ղեկավարվում էր պատերազմական նախարար Էնվեր փաշայի կողմից⁹⁰: Ինքնին հասկանալի է, որ, առանց Ներքին գործերի նախարարության թույլտվության և աջակցության, ոչ պաշտոնական, կուսակցական կառույցը պարզապես չէր կարող նման բնույթի և մասշտաբների զանգվածային հանցագործություններ իրականացնել: Օսմանյան արխիվային փաստաթղթերով հաստատվում է, որ 1915 թ. փետրվարին Շաքիրը մեկնել է մայրաքաղաք՝ կառավարության անդամներին համոզելու, որ հայերի հարցում վճռական որոշում կայացնեն, և արևելյան նահանգներ է վերադարձել համապատասխան առաքելությամբ⁹¹: Ակնհայտ է, ուրեմն, որ Ներքին գործերի նախարարությունից «Հատուկ կազմակերպությանը» տեղեկություններ են տրամադրվել տեղահանվողների երթուղիների և կայանների վերաբերյալ, որոնց հիման վրա էլ այդ կառույցի հրոսակախմբերը հետապնդել և ոչնչացրել են հայերի քարավանները:

Այսպիսով՝ հայերի տեղահանությունն ու կոտորածները մեկ կենտրոնից՝ երիտթուրքերի կառավարությունից ղեկավարվող գուգահեռ գործընթացներ էին, որոնք կազմում էին մանրակրկիտ ծրագրված և հետևողականորեն իրականացվող ցեղասպանության քաղաքականության երրորդ փուլը, որը հաջորդել էր հայ տղամարդկանց օսմանյան բանակում և հայ մտավորականներին աքսորի ճանապարհին ոչնչացնելու առաջին և երկրորդ փուլերին: **Զու-**

88 Տե՛ս նույն տեղում, էջ 250:

89 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 46:

90 Տե՛ս **Авакян А.**, նշվ. աշխ., էջ 75-76:

91 Տե՛ս **Աբջան Թ.**, նշվ. աշխ., էջ 219:

գընթաց իրականացված տեղահանություններն ու կոտորածները իրարից տարանջատելու և միմյանց հակադրելու միջոցով Աքչամը փորձում է կասկածի տակ դնել այդ երկու հանցագործությունների՝ հավասարապես թուրքական պետության կողմից կազմակերպված լինելու փաստը, ինչը Հայոց ցեղասպանության համար վերջինիս պատասխանատվությունը ժխտելու նուրբ հնարք է:

Նույն նպատակով հայերի բռնի տեղահանությունների վերաբերյալ Աքչամն առաջ է քաշում Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում բնակչության ընդհանուր թվի «5-10 %-ի սկզբունքով» նրանց վերաբնակեցնելու վարկածը: Նա չի թաքցնում իր հիացմունքը հայերին «5-10 %-ի սկզբունքով» Օսմանյան կայսրության տարածքում ցրելու երիտթուրքերի, այսպես կոչված, «սոցիալական ինժեներության» նկատմամբ, որի նպատակն էր հայերի թիվը նվազեցնել այն աստիճան, որ նրանք այլևս «սպառնալիք» չհամարվեին, և պայմաններ ստեղծվեին, որ նրանց մնացորդը պարզապես տարալուծվեր մահմեդական հանրույթի մեջ⁹²: Իզմիթի գավառի արհեստագործական ընկերություններում աշխատող հայ բանվորներն ու ծառայողներն իրենց ընտանիքների հետ պետք է հաստատվեին տեղի մահմեդական գյուղերում՝ պայմանով, որ չգերազանցեին բնակչության 5 %-ը⁹³:

Աքչամը պնդում է, որ, եզակի բացառություններով, տարբեր նահանգներում հայերի վերաբնակեցման գործընթացում թուրքական իշխանություններն առաջնորդվել են «5-10 %-ի սկզբունքով»⁹⁴: Սակայն իր իսկ մեջբերած օսմանյան վավերագրերով իր վարկածը պարզապես հերքվում է: Այսպես՝ Էրզրումի նահանգապետին ուղղված Թալեաթի 1915 թ. մայիսի 27-ի հեռագրում նշվում է, որ «քանի որ նահանգը գտնվում է Ռուսաստանի հետ սահմանին, մեր որդեգրած սկզբունքի համաձայն, ոչ մի հայի չի կարելի թույլ տալ մնալու այնտեղ»⁹⁵: 1915 թ. հունիսի 20-ին Թալեաթը նույնաբովանդակ հեռագիր է ուղարկել նաև Տրապիզոնի, Խարբերդի, Սեբաստիայի ու Դիարբեքիրի նահանգապետերին և Ջանիկի (Սամսուն)

92 Տե՛ս նույն տեղում, էջ 416-417:

93 Տե՛ս նույն տեղում, էջ 305:

94 Տե՛ս նույն տեղում, էջ 314:

95 Նույն տեղում, էջ 308-309:

գավառապետերին⁹⁶՝ հակառակ այն բանի, որ այդ տարածքները սահմանակից չէին Ռուսաստանին:

Աքջանը հարկադրված է ընդունել, որ, այսպես կոչված, «5-10 %-ի սկզբունքով» վերաբնակեցված հայերն իրենց նոր բնակավայրերում 1916 թ. ամռան ամիսներին ենթարկվեցին կոտորածների երկրորդ ալիքին⁹⁷, ինչը, նրա կարծիքով, տեղի ունեցավ այն պատճառով, որ վերաբնակեցման վայրերում հայերի ընդհանուր թիվը գերազանցում էր թույլատրված շեմը⁹⁸: Այս պնդումը, սակայն, նույնպես հերքվում է նրա կողմից բերվող օսմանյան վավերագրով, որի համաձայն՝ անգամ այն բանից հետո, երբ Դեր-Ջորի համակենտրոնացման ճամբարից տեղեկացրին, որ հայերի թիվը գերազանցում է տեղի բնակչության ընդհանուր թվի 10 %-ը, իշխանությունները շարունակեցին այնտեղ ուղարկել նոր քարավաններ⁹⁹, և հասկանալի է, որ դա արվում էր ոչ թե հայերին վերաբնակեցնելու, այլ բնաջնջելու նպատակով: 1916 թ. ամռանը վերաբնակեցման վայրերում կոտորածների հետևանքով Դեր-Ջորում մոտ 200.000 հայ ոչնչացվեց, իսկ դեռևս հրաշքով ողջ մնացած հայկական ճամբարները Սիրիայի հյուսիսային շրջաններից սկսեցին տեղահանվել ավելի հարավ՝ Եփրատի երկայնքով կամ դեպի Ռաս-ուլ-Այն¹⁰⁰: 1919 թ. հունվարին, երբ բրիտանական զորքերը մտան Դեր-Ջոր, այնտեղ գտան ընդամենը 980 հայ¹⁰¹:

Հատկանշական է, որ Դեր-Ջորում հայերի կյանքի պայմանների առնչությամբ Աքջանը գերմանացի երկու ականատեսների իրարամերժ կարծիքներ է ներկայացնում՝ առանց որևէ մեկնաբանության: Ռազմական բժիշկ, կապիտան Շախտը 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկուցագրում հայտնում էր, որ տեղահանման վայրերում թուրք պաշտոնյաները հայերին փող, հաց և այլուր էին բաժանում՝ բացառությամբ նրանց, ովքեր մահը գերադասում էին կյանքից¹⁰²՝ ակնարկելով, որ վերջիններս հրաժարվում էին ընդունել իշխանությունների տրամադրած սնունդը: Հակառակ սրան՝ հյուպատոս Լիթեն 1916

96 Տե՛ս նույն տեղում, էջ 309:

97 Տե՛ս նույն տեղում, էջ 315:

98 Տե՛ս նույն տեղում, էջ 337:

99 Տե՛ս նույն տեղում, էջ 312-313:

100 Տե՛ս նույն տեղում, էջ 343:

101 Տե՛ս նույն տեղում, էջ 339:

102 Տե՛ս նույն տեղում, էջ 330:

թ. փետրվարի 6-ի զեկույցում նշում էր, որ Դեր-Ջորում հայերն իրենք էին գնում իրենց ուտելիքը, և ով դրամ չունեի, ոչինչ չէր ստանում¹⁰³: Այս իրարամերժ տեսակետները ներկայացնելուց հետո հեղինակը որևէ վերաբերմունք չի արտահայտում դրանց նկատմամբ, ինչպես դա նկատվում է մյուս նման դեպքերում: Նման կրավորական կեցվածքով թուրք պատմաբանն ընթերցողի մոտ արհեստական տպավորություն է ստեղծում, թե իբր թուրքական իշխանությունները լավ թե վատ հոգ են տարել անապատներ քշված հայերի մասին: Հաշվի առնելով Դեր-Ջորում հայերի մահացության չափազանց բարձր մակարդակը՝ կարելի է ենթադրել, որ օսմանյան բանակում ծառայող գերմանացի սպան, կաշկանդված լինելով ծառայողական կարգապահությամբ, իր տեղեկությունները համապատասխանեցրել է թուրքական պաշտոնական վարկածին, մինչդեռ գերմանացի հյուպատոսն իր վերադասին փորձել է ներկայացնել այնտեղ տիրող իրական վիճակը:

Ի հեճուկս երիտթուրքերին ամեն կերպ «մարդասեր» ներկայացնելու Աբչամի ջանքերի՝ պետք է արձանագրենք, որ հայերին Միջագետքի և Սիրիայի անապատներ ի սկզբանե տեղահանում էին ոչ թե նրանց գոյությունը պահպանելու, այլ ոչնչացնելու նպատակով: Քանի որ անմարդկային պայմաններում հայերի ոչնչացման գործընթացը թուրքական իշխանությունների ծրագրածից ավելի դանդաղ էր ընթանում, ուստի նրանք անցան վերջնական բնաջնջման տարբերակին¹⁰⁴: Կենտրոնացման վերջնական վայրերում հայերի բնաջնջման գործում միջոցներ խնայելու նպատակով որոշվեց դրանում ներգրավել մոտակա բնակավայրերի մահմեդականներից ձևավորված հատուկ ջոկատներին¹⁰⁵:

Մահմեդական բնակչության մեջ «5-10 %-ի սկզբունքով» հայերի վերաբնակեցումը Աբչամը փորձում է ներկայացնել իբրև երիտթուրքերի «բարեգույթ» վերաբերմունք, մինչդեռ անգամ այդ դեպքում հայերն անընդհատ ենթարկվելու էին մահմեդականների հարձակումներին ու խտրական վերաբերմունքին և դատապարտված էին ձուլման, ինչն էլ տեղի ունեցավ հետագա տասնամյակների ընթացքում: Այսպիսով՝ հայերին վերաբնակեցնելու թուրքական իշխա-

103 Տե՛ս նույն տեղում:

104 Տե՛ս **Марукян А. Ц.**, Проблема Геноцида армян в современной геноцидологии, Ер., 2010, էջ 38-39:

105 Տե՛ս **Авакян А.**, նշվ. աշխ., էջ 93:

նությունների քաղաքականության ընթացքում «5-10 %-ի սկզբունքի» պահպանման վարկածը ոչ այլ ինչ է, քան թուրքական իշխանությունների հորինած քարոզչական հնարք, որով Աքչամը փորձում է նվազեցնել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հրեշավոր հանցագործության ծանրության աստիճանը և դրանում թուրքական իշխանությունների պատասխանատվությունը:

Եզրակացություններ

Աքչամի աշխատության արժեքն այն է, որ շրջանառության մեջ են դրվում ոչ թուրք մասնագետների համար դժվարիասանելի օսմանյան արխիվային փաստաթղթեր, որոնցով հաստատվում են այլ աղբյուրներից հայտնի տեղեկությունները՝ լրացվելով մանրամասնություններով: Պետք է նշել, սակայն, որ թուրք պատմաբանը ոչ միշտ է անաչառորեն մեկնաբանում և վերլուծում իր շրջանառած օսմանյան արխիվային փաստաթղթերը, ավելին՝ երբեմն նրա դատողություններն ուղղակիորեն հակադրվում են իր իսկ մեջբերած փաստաթղթերի տեղեկություններին:

Քննադատելով թուրքական պաշտոնական վարկածն առաջ մղող պատմաբաններին՝ Աքչամը փորձում է ներկայանալ անաչառ գիտնականի կերպարով, սակայն Հայոց ցեղասպանության պատմության առանցքային հարցերում կրավորական կեցվածքի որդեգրումը վկայում է այն մասին, որ գործնականում նա հանդես է գալիս հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը ծածուկ կասկածի տակ դնողի դերում: Թուրքական պաշտոնական ժխտողականությունից Աքչամի մոտեցումները երբեմն տարբերվում են լոկ նրանով, որ, այսպես կոչված, «կոշտ» հերքման փոխարեն առաջ են մղվում «զգուշավոր կասկածամտության» կամ «աննկատ ժխտման» թեզերը: «Հայոց ցեղասպանություն» եզրույթը գործածելով ու առերևույթ այդ հանցագործությունը դատապարտելով՝ թուրք պատմաբանն ընթերցողի մոտ կասկած է հարուցում հայերի ոչնչացման շարժառիթների հարցում՝ նշելով, որ այդ քաղաքականությունը ռասիստական կամ ազգայնամոլական բնույթ չի ունեցել,

քանզի հայերի ցեղասպանության հիմքում եղել է կայսրության «պետական շահը»¹⁰⁶:

Աքչամը հակված է հայերին համարելու Օսմանյան կայսրության ամբողջականության «սպառնալիք», որը վերացնելու նպատակով երիտթուրքերը դիմեցին, այսպես կոչված, «սոցիալական ինժեներության», ինչը ենթադրում էր հայերին ցեղասպանելու քաղաքականության տարրերը՝ բնաջնջում, բռնի տեղահանություն, իսլամացում և ձուլում¹⁰⁷: Այսինքն՝ Աքչամը որոշ վերածնակերպումներով փաստորեն կրկնում է Հայոց ցեղասպանությունը ժխտող ու նենգափոխող թուրքական պաշտոնական պատմագրության մոտեցումները, որոնցով արդարացվում է ազգայնամուլական գաղափարախոսության հիման վրա հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցավոր քաղաքականությունը:

Աքչամն անընդունելի է համարում անվանի հայ ցեղասպանագետ և իր ուսուցիչ Վ. Դադրյանի այն մոտեցումը, որ, ի տարբերություն նացիստների, «օսմանյան թուրքերը բավական բարձր են գնահատել հայ երեխաների մարմնավորած գենոֆոնդի արժեքը»՝ դրա մեջ «ռասիստական մտածելակերպի խրախուսման վտանգ» տեսնելով¹⁰⁸: Մինչդեռ Դադրյանի այս դատողություններում արտացոլված է դառն իրականությունը, քանի որ բռնի իսլամացված հայ որբերից, ինչպես նաև գեղեցիկ հայ աղջիկների բռնի ամուսնություններից ծնված սերունդներով ամբողջությամբ փոխակերպվեց թուրքերի գենոֆոնդը: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե Աքչամի, այսպես կոչված, «սոցիալական ինժեներության», այլ պարզապես «գենային ինժեներության» մասին է:

Հայերի ցեղասպանությունն իրագործելու թուրքական իշխանությունների շարժառիթների հարցում Աքչամի տարաբնույթ դատողություններից կարելի է ենթադրել, որ նա կա՛մ դեռևս վերջնականապես չի կողմնորոշվել այդ հարցում, կա՛մ էլ այդ կերպ փորձում է կասկածի տակ դնել հայերի ցեղասպանության իրագործման հանցավոր մտադրության առկայությունը, ինչն այդ հանցագործության որակման գլխավոր բաղադրիչն է: Պատահակա՞ն է արդյոք Աքչամն իր աշխատությունն ավարտում այն դատողություններով, որ, ան-

106 Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 414-415:

107 Տե՛ս նույն տեղում, էջ 416, 551:

108 Տե՛ս նույն տեղում, էջ 418-419:

կախ նրանից, թե իրավական տեսանկյունից ինչպես ենք որակում հայերի բնաջնջումը, առաջնահերթ է դրա բարոյական ճանաչումը, որ կատարվածն անարդարացի գործողություն է եղել, որն արժանի է բարոյական կշտամբանքի¹⁰⁹: Թուրք պատմաբանը, այսպիսով, փորձ է անում Հայոց ցեղասպանության համար թուրքական պետության պատասխանատվության հարցը տեղափոխելու բացառապես բարոյական դաշտ, քանզի իրավական կամ քաղաքական հարթություններում տվյալ հարցի քննարկումն անխուսափելիորեն հանգեցնելու է թուրքական պետությանը պատասխանատվության ենթարկելու և հատուցման գործընթացների:

Արժևորելով հանդերձ Հայոց ցեղասպանության պատմության խնդիրների վերաբերյալ Թ. Աքչամի՝ տարբեր լեզուներով հրատարակված աշխատությունները, ինչպես նաև նրա կողմից դժվարհասանելի օսմանյան արխիվային փաստաթղթերի շրջանառումը՝ կարծում ենք, որ Հայաստանում նրա գրքերը թարգմանելու և վերահրատարակելու դեպքում դրանք նախապես պետք է հարստացվեն հայկական տեսակետն արտացոլող պատշաճ նախաբաններով ու համապատասխան ծանոթագրություններով: Հակառակ դեպքում ստացվում է, որ մենք ընդունում ենք սկզբունքային և հայեցակարգային հարցերում թուրք պատմաբանի կողմնակալ ու ոչ օբյեկտիվ դատողությունները, ինչպես նաև այն մոտեցումներն ու եզրակացությունները, որոնք գրեթե նույնանում են Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրքական պաշտոնական պատմագրության տեսակետներին:

Արմեն Յ. Մարության

Պատմ. գիտ. դոկտոր

Արմեն Յ. Մարության – 60-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի 4 ժողովածուների կազմող է: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, մասնավորապես՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 553-554:

Summary

Taner Akçam, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic cleansing in the Ottoman Empire*, Yerevan, 2015, 583 p.

Armen C. Marukyan
Doctor of Sciences in History

Keywords – The Armenian Genocide, ethnic cleansing, Ottoman Empire, Young Turks, “Special Organization”, Ottoman archival documents, “5-10%” resettlement of Armenians, “social engineering”.

The value of Akçam’s work lies in the fact that a large number of Ottoman archival documents, which are difficult to access for non-Turkish professionals, corroborate information known from other sources and adding additional details. However, it should be noted, that the Turkish historian does not always interpret impartially, analyzing the Ottoman archival documents circulated by him, moreover, his judgments sometimes directly contradict the information in the documents quoted by him.

Criticizing the historians who promote the Turkish official version, Akçam tries to present himself as an impartial historian, but his adoption of a conventional stance on fundamental issues of the history of the Armenian Genocide shows that in practice he is acting as a secret suspect of the crime against the Armenian people. Akçam’s approach differs from the official Turkish denial historiography in that, instead of so-called “hard denial”, he promotes “cautious suspicion” or “unnoticed denial”. Using the term “Armenian Genocide” and condemning the crime, the Turkish historian casts doubt on the motives of the Armenian Genocide, noting that the policy was not racist or nationalistic, that the “state interest” of the empire was the basis of the Armenian Genocide.

Akçam tends to see Armenians as a “threat” to the integrity of the Ottoman Empire, to eliminate which the Young Turks resorted to so-called “social engineering”, which means elements of a policy of genocide against Armenians: extermination, forced deportation, Islamization and assimilation. Thereby, Akçam in fact repeats the approaches of the official Turkish historiography that denies and falsifies the Armenian Genocide, which justifies the criminal policy towards the Armenian people based on the nationalist ideology of pan-Turkism.

Akçam's various judgments on the motives of the Turkish authorities for committing the Armenian Genocide suggest that either he has not yet made a final decision or in this way he tries to hide the real motives, at the same time raising doubts about the criminal intention to commit the Armenian Genocide, which is the main component of qualifying that crime. Is it a coincidence that Akçam concludes his work with the assumption that, regardless of how we qualify the extermination of Armenians from a legal point of view, it is first and foremost a moral recognition that it was not an unjust act worthy of moral reproach? The Turkish historian is thus trying to transfer the issue of the Turkish state's responsibility for the Armenian Genocide to a purely moral field, as the discussion of this issue in the legal or political spheres will inevitably lead to processes of responsibility and compensation that are absolutely unacceptable for the Turkish state.

Assessing the works of T. Akçam published in different languages on some issues of the history of the Armenian Genocide, as well as his introduction into scientific circulation of unpublished Ottoman archival documents, nevertheless, we believe that Armenian specialists should have taken part in the process of translating and republishing these books in Armenia . Otherwise, it turns out that we share the biased judgments of the Turkish historian on fundamental-conceptual issues, as well as the approaches and conclusions that are almost identical with the views of the official Turkish historiography denying the given crime.

**Танер Акчам, Преступления младотурок против человечества:
Геноцид армян и этнические чистки в Османской империи,
«Тигран Великий», Ереван, 2015, 583 с.**

Армен Ц. Марукян
Доктор ист. наук

Ключевые слова - Геноцид армян, этнические чистки, Османская империя, младотурки, «Особая организация», османские архивные документы, переселение армян по принципу «5-10%», «социальная инженерия».

Ценность труда Танера Акчама заключается в том, что в научный оборот вводится большое количество недоступных для неспециалистов по тюркологии османских архивных документов, подтверждающих различные факты истории Геноцида армян, которые известны из других источников, но одновременно раскрывают подробности этих событий. Следует, однако, отметить, что турецкий историк не всегда беспристрастно интерпретирует и анализирует содержание османских архивных документов, более того, его суждения иногда прямо противоречат сведениям из цитируемых им документов.

Критикуя историков, продвигающих турецкую официальную версию, Акчам пытается представить себя беспристрастным историком, однако, его неоднозначная позиция по фундаментальным вопросам истории Геноцида армян дает понять, что на деле он пытается поставить под сомнение факт преступления, совершенного против армянского народа. В отличие от «жесткого отрицания» официальной турецкой историографии, в подходах Акчама прослеживаются тезисы «осторожного сомнения» или «незаметного отрицания» Геноцида армян. Употребляя термин «Геноцид армян» и вроде бы осуждая это злодеяние, в то же время турецкий историк ставит под сомнение мотивы данного преступления, заявляя, что проводимая в отношении армян политика не была расистской или националистической, и что Геноцид армян был осуществлен исходя из «государственных интересов» империи.

Акчам склоняется к тому, что армяне были «угрозой» целостности Османской империи, для устранения которой младотурки прибегли к так называемой «социальной инженерии», что включает в себя такие элементы

политики геноцида, как истребление, насильственная депортация, исламизация и ассимиляция. Этим способом Акчам практически повторяет мнение официальной турецкой историографии, которая отрицая Геноцид армян, фальсифицирует историю и оправдывает преступную политику в отношении армянского народа, основанную на националистической идеологии пантюркизма.

Различные суждения Акчама о мотивах совершения Геноцида армян свидетельствуют о том, что либо он окончательно еще не определился в этих вопросах, либо таким образом пытается замаскировать свои истинные мотивы, вызывая сомнения в умысле совершения Геноцида армян, что является ключевым элементом в составе данного преступления. Случайно ли то, что Акчам завершает свою работу заявлением, что не столь важно, как с юридической точки зрения квалифицируется уничтожение армян, а важнее моральное признание того, что это было несправедливым поступком, заслуживающим морального порицания? Таким образом, турецкий историк вопрос ответственности турецкого государства за совершение Геноцида армян пытается перевести исключительно в моральную плоскость, поскольку рассмотрение данного преступления с политико-правовой точки зрения неизбежно приведет к нежелательным для турецкого государства вопросу ответственности за возмещение ущерба, причиненного вследствие совершения Геноцида армян.

Высоко оценивая изданные на разных языках труды Т. Акчама по некоторым вопросам истории Геноцида армян, а также факт открытия ранее не опубликованных османских архивных документов, тем не менее, считаем, что армянские специалисты должны были принимать участие в процессе переиздания его книг в Армении. В противном случае создается впечатление, что мы разделяем предвзятые и необъективные суждения турецкого историка по фундаментальным, концептуальным вопросам истории Геноцида армян, в том числе такие подходы и выводы Т. Акчама, которые практически идентичны с позицией официальной турецкой историографии, отрицающей данное преступление.

REFERENCES

1. **Ak'ch'am T'.**, Yeritt'urk'eri gortsats vochirë mardkut'yan dem. Hayots' ts'eghaspanut'yunë yev ët'nik ztummerë Ösmanyan kaysrut'yunum, Yer., "Tigran Mets", 2015 (**In Armenian**).
2. **Auron Y.**, Anënduneli antarberut'yun. Sionizmë yev Hayots' ts'eghaspanut'yunë, Yer., 2013 (**In Armenian**).
3. **Avakjan A.**, Genocid 1915 g. Mexanizmy prinjatija I ispolnenija reshenij, Jer., 1999 (**In Russian**).

4. **Gamelen A., Bron Zh.-M.**, Vosstanovlennaja pamjat', Jer., 1995 (**In Russian**).
5. Hayastanë mijazgayin divanagitut'yan yev sovetakan artak'in k'aghak'akanut'yan p'astat'ght'erum (1828-1917), khmb.` **J. Kirakosyan**, Yer., 1972 (**In Armenian**).
6. Hayeri ts'eghaspanut'yunë ësht yeritt'urk'eri datavarut'yan p'astat'ght'eri, arajabanë, t'argmanut'yunë yev tsanot'agrut'yunnerë` **A. P'ap'azyani**, Yer., 1988 (**In Armenian**).
7. **Hovhannisyan N.**, Hayots' ts'eghaspanut'yunë ts'eghaspanagitakan hayets'akargayin hamakargum, Yer., "Zangak-97", 2002 (**In Armenian**).
8. **Marukjan A.**, Problema Genocida armjan v sovremennoj genocidologii, Jer., 2010 (**In Russian**).
9. **Maruk'yan A.**, Hayots' ts'eghaspanut'yan hetevank'neri haght'aharman himnakhndirnern u patmairavakan himnavorumnerë, Yer., 2014 (**In Armenian**).
10. Prava cheloveka. Sbornik mezhdunarodnyx dogovorov, t. 1, ch. 2, Universal'nyje dogovori OON, N'ju-Jork, Zheneva, 2002 (**In Russian**).
11. **Simonyan H.**, Hayeri zangvatsayin kotoratsnerë Kilikiayum (1909 t'. april), Yer., 2009 (**In Armenian**).
12. **Spirov D. A.**, Hayeri sarsap'eli kotoratsnerë (1894-1896 t't'), Yer., 1997 (**In Armenian**).
13. **Tatryan V.**, Hayots' ts'eghaspanut'yan zhkhtman t'urk'akan himnakan p'astarknerë: Aghavaghman yev keghtsararut'yan usumnasirut'yun, Yer., 2005 (**In Armenian**).
14. **Xudaverdjan K., Saakjan R.**, Genocid armjan skvoz' prizmu desjatiletij, Jer., 1995 (**In Russian**).